

նախով աւելի և աւելի ստիպողական պէտք է դառնայ:


Զուիցեցիւ:

Բաղէլի միսինսարական ընկերութիւնը, որ այնպիսի ակտուր յիշատակներ է թողել մեր հայրենիքում՝ իւր տարեկան տանը կատարել է յունիս 26—30-ին և այդ միջոցին կարգացուած հաշիւները երևում է, որ վերջին ժամանակ նա շատ յաջող գործունէութիւն է ունեցել հեթանոսների մէջ և նորա գործունէութիւնը քանի գնում ընդարձակուում է: 1898 թ.-ին նա մի քանի է նշգրտատանում, Զինատանում և Աֆրիկայում 2670 հեթանոսներ, ունեցել է ընդամենը 38,637 բրիտանիկութիւն ընդունած անդամներ, 18,627 մանուկների կրթութիւն է տուել իւր դպրոցներում: Համեմատութեամբ 1878 և 1888 թ.-ներին՝ նորա ուժերը այս քան կամ ատարաւոր ընթացքում գնալով մեծացել են և արդիւնքը համապատասխան կերպով բազմացել է: 1878 թ.-ին նա ունէր 33 գլխաւոր և 123 երկրորդական կենդրոններ, որոնց մէջ գործում էին 106 եւրոպացի և 279 տեղացի միսինսարներ. այժմ ունի 56 գլխաւոր և 426 երկրորդական կենդրոններ, 181 եւրոպացի և 984 տեղական գործիչներով. իսկ բրիտանիկութիւն ընդունածների և ուսանող մանուկների թիւը եռապատուել ու քառապատուել է: Ըստ այնմ և ծախքը, որ առաջ 742,000 մարկ էր, այժմ դարձել է 1,211,000 մարկ: Ամէնից աւելի աչքի է ընկնում Զինատանում եղած յառաջագիմութիւնը, որ երկար ժամանակ ամենազգուար մատակցին էր համարուում միսինի համար. իսկ այժմ մի տարուայ մէջ 5600 հաւատացողների վերայ 1020 աւելացել է: Դորա պատճառն է գլխաւորապէս երկրի այժմեան քաղաքական խզուելի վիճակը, որ մաքերի սաստիկ յուզում է յառաջ բերել աղղարանկութեան մէջ և կորցնել տուել հաւաքող գէպի սեփական կառավարութիւնն ուստուածները: Բրիտանիկութիւն ընդունել կամ մեղոյների թիւը խիտ մեծ է, ըայց բողոքական միսինսարները զուգանում են անպատրաստ խմբեր միլիոնացի մինչ կաթոլիկները ոչ ոքի չեն միջում, ուստի և նոցա արտաքին յաջողութիւնն աւելի մեծ է, մօտ միջոցներս Իէն կոչուած ամբողջ ցեղը կաթոլիկութիւն է ընդունել:

Ներսիս աշխարհ:

Հատ հետաքրքրական է ճապոնական բուդդայականները գլխաւոր քրմապետի բոլոր հաստացեալներին ուղղած մի նոր շրջաբերականը, որով յորդորում է յարգանքով վերաբերուել դէպի օտար կրօնները: Մեր նոր սահմանադրութիւնը,

նրա ասում է նա, տուել է երկրի բոլոր ընտիկներին՝ ճապոնացի լինեն թէ օտարական, խղճի անսահման ազատութիւն և ոչ մի ճապոնացի ինչ կրօնի կուղէ պատկանի, իրաւունք չունի այլևս աւելի մեծ և աւելի լաւ համարելու իրեն, քան ուրիշ որ և է կրօնի հեռեցները. Բւրաքանչիւր ճապոնացի հաւատարարէս պարտաւոր է իւր կայսեր խոստումը կատարել և նորա համաձայն ընթանալ: Մանուանգ բոլոր բուդդայական քրմերը պարտականութիւն ունին օրինակ լինել հաստացեալներին և յարգանք ու պատիւ ցոյց տալ քրիստոնէայ հաղեւորականներին: Ոչ ոք նոցանից և ոչ մի հաւատացող աշխարհական իրաւունք չունի իւր սեփական հաւատոյ պատուէրները որոնց նա հարկաւ այտուհետեւ ևս խտուել պէտք է հետեւէ՝ պատճառաւք վերցնելու օտար կրօններ կամ նոցա հեռեցներ չյարգելու համար:—Որչափ յառաջ է գնացել ուրեմն քաղաքակրթութիւնը ճապոնականում, որ այսպիսի ներդրամաւ օղի և ազատ գաղափարներ է ներշնչում մի քրմապետի:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԼԵՂՈՒՆ ԵՒ ԳԵՂԻ ՍԵՆՉԵՐՉԵԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ.

«Լեզու հուր՝ զարդ անիրատւեան լեզու հաստատեալ է յանդամն մեր, որ զամենայն մարմինն ապականէ»: ասում է Յակոբոս առաքեալը՝ մարդու լեզուն իբրեւ մեծագոյն չարեաց աղբիւր ներկայացնելով: Եւ յիրաւի է թէ մարդիկ աւետարանական խօսքի համաձայն չար են իրենէ (Մատթ. Է. 11), իսկ լեզուն նոցա շար մաքերի եւ շար ցանկութիւնների արտաբերողն է ու թարգմանը՝ հասկանալի պէտք է լինի, որ նորա շարաշար գործածութիւնից մեծ վնասներ կարող են յառաջ գալ: Լեզուն, խօսքը միջին տեղն է բռնում՝ մտքի եւ գործի մէջ. շար միտքը միայն մտածողին է վնասում, շար գործը նաեւ ուրիշին. շար խօսքը թէպէտ միշտ անհրաժեշտաբար զործ չէ դառնում եւ

վնասում նորան, ում դէմ ուղղուած է, բայց որովհետեւ աւելի տարածական է, եւ որ շատ աւելի հեշտ է խօսելը քան գործելը, ուստի նորա պատճառած վնասները յաճախ աւելի մեծ են լինում: Չար մարդիկ շատ կան, որոնք գործի անընդունակ են եւ իրենց շարութեան թոյնը խօսքով են թափում: այդ թոյնը վարակում է ուրիշներին եւ ճիւղաւորեալ քարդ վիճակի մէջ արդէն գործնական արդիւնք տալիս: Այն եւս կայ, որ շար շործի առաջը շատ անգամ հեշտութեամբ կարելի է առնել, «բայց զեզու մարդկան ոչ որ կարէ հնազանդել՝ գշարն եւ զանկարգն եւ զլի թունօց մահարեւն»:

Լեզուի քոլոր այս յատկութիւնները զբերթէ զօրանում եւ նոր ոյժ են տալնում: Երբ խօսքը զիր է դառնում: Եթէ Յակոբոս առաքեալը մեր ժամանակ ապրէր՝ անշուշտ նոյն դառնութեամբ, ինչ որ լեզուի մասին է գրում: կարէր զբէ մասին: Գրի առած խօսքի ազդեցութիւնն աւելի հեռու է տարածուում եւ արծանացած լինելով՝ աւելի հեղինակութիւն եւ աւելի տեսականութիւն ունի: Գիրը քաղաքակիրթ մարդկութեան համար այնպիսի կարեւոր գործօն է եւ այնչափ քարիքներ է յառաջ քերել, որ մենք սովորաբար մոռանում ենք նորա պատճառած շարիքները՝ մոռանում ենք, որ իւրաքանչիւր գործօն ոյժ միայն այն դէպքում քարերար է, երբ ի քարին է գործ դրուում: մինչդեռ հաւասար չափով կարող էր ի շարը գործադրուել եւ շար արդիւնք ունենալ, Գիրը մի միջնորդ է միայն մարդոց մտքերը հեշտութեամբ եւ արագութեամբ միմեանց կամ տեղով ու ժամանակով հեռու եղողներին հաղորդելու: Ըստ է եթէ մտքերը քարի են եւ օգտակար, իսկ եթէ վնասակար են, փշացած ու անարդարական ուղեղի ծնունդ՝ քնականաբար նոցա արդիւնքն եւս վնասակար կլինի, եւ որչափ հեռուն է տարածուում՝ նոցա ազդեցութիւնը տեղով եւ ժամանակով՝ այնչափ վատ: Երբեմն մի վնասակար գաղափար, զրի առնուելով՝ ամբողջ սերունդների աշխարհայեցողութիւնը խեղաթիւրել, մի անբարոյական զգացում: հրապարակախօսի զբէ տակ ընկած՝ հազարաւորների սիրտն ու հոգին ապականել կարող է:

Այն խորհրդածութիւններն անելու առիթ եղաւ մեզ «Պատրիարք մը որ կգրօսնու» վերնադրով մի յօդուած, Փարիզում հրատարակուող Առաջին թերթի մէջ:— Մենք սովոր էինք նաեւ աւելի մերձաւոր տեղերի ազգային մամուլի կողմից այնպիսի լեզու գործածած տեսնել, որից թուղթը կկարմրէր, եթէ զգայութիւն ունենար, տեսնել էինք, թէ ինչպէս հոգում ու սրտով փշացած մարդիկ ապարէզ են գտել այդտեղ՝ իրենց ստոր կրքերին յազուրդ տալու, յանդուգն պոռոտախօսութեամբ փառաց դափնիներ վնասակարելու, ինչպէս փողոցի մի տղայ անդուռն քերանով անպատիժ կերպով անուանարկել եւ հայհոյել է հասարակական պատկառելի գործիչներին՝ ոտքի տակ տուել սրբութիւն, պատիւ, առաքինի անուն: ինչպէս երկու ախոյեաններ հակառակ թերթերի էջերից մրցել են միմեանց դէմ թէ ով ամենախելալի եւ ամենազազրալի մօրը հակառակորդի զխին կթափէ. — բայց այն, ինչ որ Փարիզի թերթն է հանդէս քերել՝ նորանշան մի քան է, որ քոլոր մինչեւ այժմ՝ եղածների փառքը նսեմացնում է:— Մեր խօսքը Գ. Պոլսոյ Ամին, Պատրիարքի մասին չէ, որ այդ թերթի թղթակցի հիւանդոտ երեւակայութեան առաջ պատկերանում է իսկական Գ. Պ. — ախորժակին համեմատ գծուած մի դէմքով, Օրմանեան Սրբազան այնպիսի դիրք ունի եւ գործում է այնպիսի պայմանների մէջ, որ նորա մասին ամենաճշգրայեղ կարծիքներ լսելը զարմանալի չալտք է երեւայ, եւ երբ մէկը իրեն յատուկ լեզուով է արտայայտում՝ այդ կարծիքները՝ կարող էինք, Գ. Պ. — ի նկատի ունենալով՝ անուշադիր թողնել ու մեր գործին գնալ: պատրիարքը, թէպէտ օծեալ, թէպէտ քարծր կարգի եկեղեցական եւ ազգի ներկայացուցիչ՝ մահկանացու մարդ է այնուամենայնիւ, եւ նորան հայհոյելը մարդ հայհոյել է. բայց երբ յանդգնութիւնն այնտեղ է հասնում, որ լպիրշ ակնարկութիւնների առարկայ են դարձնում՝ միակ սուրբն ու աստուածայինը՝ մարդկութեան Փրկչի մասին ասում են «ազգային» գրական, գեղարուեստական» թերթի մէջ ցինիքական ասոնութեամբ այնպիսի քաներ, որը կարողալիս գուցէ Փարիզի արձատնեւում անուած

մարդու մագերը միայն չեն փշաքաղուում՝ բրիտանէական քարոյական ամէն զգացում մտած պէտք է լինի մեր մէջ, եթէ շուտն զայրոյթով չբացականչենք՝ այդ արդէն չափազանց է, — եւ դառնապէս մտածենք. որտեղից է զալիս այդ պղտոր հոսանքը եւ ո՞ր է տանում:

Գրական ասպարեզի վերայ գտնուող ստահակները մի զօրեղ միջոց ունին, որով իրենց դէմ եղած կամ լինելիք բողոքները խեղդում են. իրեն ազատութիւն կներկայացնեն իրենց սանձարձակութիւնը եւ դիմացի մարդուն կեղծաւոր կանուանեն, եւ մենք այնչափ ճիշդութեամբ ու համազօրեց զարկ, որ կվախենանք այդ անուշից, կվախենանք ստահակների զոռում՝ գոչումից եւ թույլ կտանք, որ նորա պրոթիւնը ոտքի տակ տան եւ իրենց փուշ զաղափարներն անարգել տարածեն: Իսկ այդ զաղափարներով անուում է մի նոր սերունդ, որի համար, եթէ քանն այսպէս առաջ երթայ՝ ամօթի ու պատկառանքի տեղ չի լինի այլ եւս եւ մինչեւ այժմ՝ եղած սահմաններն էլ կվերանան: Այնպիսի մի հանգամանք է սա, որ ինչպէս եւ լինի անուշադիր թողնել կարելի չէ. մի օր աչք խփեցինք, միւս օր՝ առիպումս պէտք է լինիք այնուամենայնիւ ի վերջոյ կամայ ակամայ հոգս քաշել այս մասին. որչափ շուտ դեռ ծայրահեղութեան չհասած՝ այնչափ լաւ: — Մենք վրդովում ենք տեսնելով, որ հասարակ ժողովուրդը խօսքի ընտրութիւն անել չգիտէ՝ երեխաների, կանանց մօտ իսկ ինչ ստեղծ խօսում է: Նոցա ակամայնորդ վարժեցնում՝ աղտեղի խօսքերի, հետեւաբար եւ սրտերը՝ աղտեղի զգացումների. ազատութեան արդիւնք ենք համարում՝ այդ եւ փափազով սպասում՝ այն օրին, երբ լուսաւորութիւն կտարածուի ամէն տեղ եւ կըթուփեան շնորհիւ կվերանան այդպիսի անտեղութիւնները: Որչափ աւելի վերադասեցուցիչ է ուրեմն տեսնել, որ լուսաւոր երազայի կենտրոնում՝ նստած մարդիկ՝ Վատութիւն եւ զեղասիրութիւն տարածելու, ժողովուրդ կըթելու նպատակով՝ ասիական կերպերի աղտեղութեանց մէջ են թափախում՝ իրենց զրեւ եւ ազէտ հայրենակիցներին այնպիսի դասեր տալիս, որոնց մօտ փողոցում

լուսմանը անմեղ քաներ են: Այն գիւրք, որ մտքեր զարգացնելու եւ սրտեր ազնուացնելու միջոց պէտք է լինէր՝ մի քանի ստահակների շնորհիւ միայն պղտորելու եւ սիրտ ապականելու միջոց է դառնում: Ո՞վ պէտք է սանձէ այդ ստահակներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Արարտաի անցեալ համարում յիշած էինք արդէն Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի ուղեորութիւնը գէպի հասիւ:

Սուրբ Աստուածածնայ աօնին Նորին Վեհափառութիւնը հասիւցիւ Ալեքսանդրապոլ ուղարկեց պատարապելու եւ ժողովրդեան միութեանը իւր ուղեկից Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսին, զիւանապետ Բարձր. Նորին վարդապետի հետ: Իսկ Ն. Ս. Օծութիւնը տասն օրի չափ հասիւում հանգչելուց յետոյ՝ երեքշաբթի օգոստ. 17-ին մեկնեցաւ հասիւցիւ, եւ նոյն օրը Բաշ-Արարանում գիշերելով 18-ին բարեհաճեց այցելել Սաղմոսափառքը, զիտելու համար իւր նախաձեռնութեամբ եղած նորոգութիւնները, նոյն գիշերը Սաղմոսափառքում անցնելուց յետոյ, Ն. Վեհափառութիւնը ամօխ 19-ին ողջ առողջ ժամանեց ի Մայր Աթոռ:

Ս. Հայրապետը օգոստ. 31-ին կրկին մի անգամ ուղեորութիւն յանձն առաւ գէպի Բիւրական ամարանոց, ուր չորս օր մնաց եւ սկստ. 4-ին վերադարձաւ ի ս. Ըջմիածին:

Ուսուցչապետ պ. Ման. իւր աշխատութիւնը վերջացնելով օգոստ. 17-ին մեկնեցաւ Մայր Աթոռից, Արաւշար գիւղի բլուրի վերայ պեղումներ անելու նպատակով: Այդտեղ 5 օր մնալուց յետոյ օգոստ. 22-ի կիրակի օրը վերադարձաւ Երեւանի վերայով գէպի իւր պաշտօնատեղին:

Երեւանի ուսուցչապետ իւր երեւան հանած արդիւնքների մասին ընդարձակօրէն տեղեկութիւն պէտք է տայ Պետերբուրգի հնա-